ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՀԱՑԱՎԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Հացավան համայնք,
ՀՀ, Կոտայքի մարզ, գ.Հացավան, Հեռ. (094) 519030
, hatsavan.kotayk@mta.gov.am

N 79
01 հունիս 2017թ.

ՀՀ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆ
ՄԱՐԶՊԵՏ
ԿԱՐԱՊԵՏ ԳՈՒԼՈՅԱՆԻՆ

Հարգելի պարոն մարզպետ
<<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 4-րդ մասի 9-րդ կետի համաձայն,Ձեզ է ուղարկվում Հացավան համայնքի ավագանու 2017թվականի մայիսի 30-ի թիվ 6 արտահերթ նիստի որոշումները:
Առդիր՝ 14 թերթ:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՇԱՎԱՐՇ ՍԱՐԳՍՅԱՆ

Կազմ. Աշխատակազմի քարտուղար՝ Ա. Խաչատրյան
Հեռ./093-212366/

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՀԱՑԱՎԱՆ
ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Հացավան համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, գ.Հացավան, (094) 519030, hatsavan.kotayk@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

30 ՄԱՅԻՍԻ 2017թվականի N 18-Ա

ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՀԱՑԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԱՐՏԱՀԵՐԹ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 17-րդ հոդվածի դրույթներով համայնքի ավագանին

որոշում է

Հաստատել Կոտայքի մարզի Հացավան համայնքի ավագանու 2017թվականի մայիսի 30-ի թիվ 06 արտահերթ նիստի օրակարգը:
1. Կոտայքի մարզի Հացավան համայնքի վարչական տարածքում հանրային սննդի կազմակերպման և իրացման կանոնները սահմանելու մասին:
2. Կոտայքի մարզի Հացավան համայնքի վարչական տարածքում արտաքին գովազդ տեղադրելու կարգն ու պայմանները սահմանելու մասին:
3. Կոտայքի մարզի Հացավան համայնքի ավագանու 2016թվականի դեկտեմբերի 22-ի N 42-Ն որոշման մեջ լրացումներ կատարելու մասին:
4. Կոտայքի մարզի Հացավան համայնքի քաղաքաշինական կանոնադրությունը հաստատելու մասին:

Կողմ -5 Դեմ -0 Չեռնպահ -0

1. ԽԱՉԱՏՐՅԱՆ ԱՆՈՒՇԱՎԱՆ
2. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ՀՐԱՅՐ
3. ՂԱՐԻԲՅԱՆ ՄՀԵՐ
4. ՊԵՏՐՈՍՅԱՆ ԿԱՐԴԱՆ
5. ՍԱՐԳՍՅԱՆ ՄԽԻԹԱՐ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ՇԱՎԱՐՇ ՍԱՐԳՍՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՀԱՑԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Հացավան համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, գ.Հացավան, (094) 519030, hatsavan.kotayk@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

30 ՄԱՅԻՍԻ 2017թվականի N 19-Ն

ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՀԱՑԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ՀԱՆՐԱՅԻՆ ՍՆՆԴԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ԵՎ ԻՐԱՑՄԱՆ ԿԱՆՈՆՆԵՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 40-րդ կետով համայնքի ավագանին

որոշում է

1. Սահմանել Հացավան համայնքի վարչական տարածքում հանրային սննդի կազմակերպման և իրացման կանոնները համաձայն հավելվածի:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

Կողմ -5 Դեմ -0 Չեռնպահ -0

1. ԽԱՉԱՏՐՅԱՆ ԱՆՈՒՇԱՎԱՆ
2. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ՀՐԱՅՐ
3. ՂԱՐԻԲՅԱՆ ՄՀԵՐ
4. ՊԵՏՐՈՍՅԱՆ ԿԱՐԴԱՆ
5. ՍԱՐԳՍՅԱՆ ՄԽԻԹԱՐ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ՇԱՎԱՐՇ ՍԱՐԳՍՅԱՆ

Հավելված
Հայաստան համայնքի ավագանու
2017թվականի մայիսի 30-ի
N 19-Ն որոշման

ՀԱՅԱՍՏԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ՀԱՆՐԱՅԻՆ ՍՆՆԴԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ԵՎ ԻՐԱՑՄԱՆ

ԿԱՆՈՆՆԵՐ

1.Սույն կանոններով սահմանվում են <<Առևտրի և ծառայությունների մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքով նախատեսված հանրային սննդի ծառայություններն իրականացնող իրավաբանական անձանց և անհատ ձեռնարկատերերի կողմից հանրային սննդի կազմակերպման և իրացման կանոնները:

2. Սույն կանոններում օգտագործվող հանրային սննդի ծառայության հիմնական հասկացություններն են՝

1) հանրային սնունդ (սննդի ապահովման ծառայություններ)՝ խոհարարական արտադրանքի պատրաստման,իրացման և (կամ) սպառման կազմակերպում.

2) հանրային սննդի ծառայություն՝ սպառողների սննդի և հանգստի անցկացման պահանջների բավարարմանն ուղղված,վաճառողի միջոցով մատուցվող ծառայությունների համալիր.

3) խոհարարական արտադրանք՝ կերակրատեսակների,խոհարարական արտադրատեսակների և կիսապատրաստվածքների համախումբ.

4) ճաշացուցակ՝ կերակրատեսակների,խոհարարական արտադրատեսակների,խմորեղենի և հացաբուլկեղենի,գնովի ապրանքների ցուցակ,որը վաճառողն առաջարկում է սպառողին՝ զանգվածի գնի նշումով.

5) հանրային սննդի օբյեկտներ՝ հանրային սննդի ծառայության իրականացման համար կառուցված կամ այդ նպատակին հարմարեցված ու սարքավորված շենք,շինություն կամ այլ վայր.

6) վաճառող՝ իրավաբանական անձ կամ անհատ ձեռնարկատեր,որն աշխատանքներ է կատարում խոհարարական արտադրանքի պատրաստման,իրականացման և (կամ) սպառման կազմակերպման ուղղությամբ:

3. Հանրային սննդի օբյեկտները դասակարգվում են հետևյալ տեսակների՝ ճաշարաններ,ռեստորաններ,սրճարաններ,բարեր,բուֆետներ և խոհարարական արտադրանքի պատրաստման և իրացման՝ այլ օբյեկտներ:

4. Հանրային սննդի ծառայություններն իրականացնում են իրավաբանական անձինք և անհատ ձեռնարկատերերը:

5. Հանրային սննդի օբյեկտը պետք է ապահովված լինի տեխնոլոգիական գործընթացն ապահովող համապատասխան սարքավորումներով և հանրային սննդի գործունեությունն իրականացնելու համար նախատեսված գույքով:

6. Բոլոր տեսակի հանրային սննդի օբյեկտները պետք է ունենան դեպի օբյեկտի մուտք տանող մատուցային և հետիոտնային ճանապարհներ,անհրաժեշտ տեղեկատվական ցուցակներ,սանհանգույցներ:

7.Հանրային սննդի օբյեկտներումթույլատրվում է ալկոհոլային խմիչքների լցնովի վաճառքը:

8. Հանրային սննդի օբյեկտը պետք է ապահովված լինի Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած պահանջները բավարարող ցուցանակով,որտեղ նշվում են հանրային սննդի օբյեկտի անվանումը,տիպը,կազմակերպական-իրավական տեսակը,իրավաբանական հասցեն ր աշխատանքային ռեժիմը:

9. Հանրային սննդի օբյեկտը պետք է ապահովված լինի տեսակը հաստատված և ստուգաչափված չափման միջոցներով:
10. Վաճառողը՝ պարտավոր է ապահովել սույն կանոնների 4-րդ,5-րդ 6-րդ, 7-րդ և 8-րդ մասերով նախատեսված դրույթների կատարումը:
11. Վաճառողն ինքնուրույն է որոշում սպառողներին սպասարկելու ձևերը և մեթոդները:
12. Վաճառողը պետք է ունենա ճաշացուցակ,որը ներկայացվում է սպառողին (գնորդին):
13. Ճաշացուցակում նշվում է խոհարարական արտադրանքի զանգվածը և վերջինիս այն գինը,որը ենթակա է սպառողի կողմից վերջնական վճարման:
14. Վաճառողը յուրաքանչյուր աշխատողին ապահովում է իր ստորագրությամբ հաստատված անվանաքարտով՝ աշխատողի լուսանկարով,անվան,ազգանվան և ազգային ստանդարտին համապատասխան պաշտոնի նշմամբ:
15. Անհատ ձեռնարկատեր հանդիսացող վաճառողը պարտավոր է կրել անվանաքարտ՝ իր լուսանակարով,անվան,ազգանվան և անհատ ձեռնարկատիրոջ պետական հաշվառման համարի նշմամբ:
16. Անվանաքարտ կրելու կարգը հաստատում է պետական կառավարման լիազոր մարմինը:
17. Վաճառողն ապահովում է հանրային սննդի օբյեկտի աշխատողների աշխատանքային արտահագուստ կրելը:
18. Աշխատողներից՝ բարմենը,խոհարարը,մատուցողը պետք է ունենան համապատասխան մասնագիտական կրթության կամ մասնագիտական պատրաստվածության մասին դիպլոմ կամ վկայական:
19. Մասնագիտական պատրաստվածության ծրագրերը համաձայնեցվում են կրթության,ինչպես նաև առևտրի և ծառայությունների ոլորտների համապատասխան լիազոր մարմինների հետ:
20. Մատուցողի ներկայացրած հաշվում (որի երկրորդ օրնակը սահմանված կարգով նմում է վաճառողի մոտ) նշվում են նրա ազգանունը,սպասարկման օրը,կերակրատեսակների,խոհարարական արտադրատեսակների,խմորեղենի և հացաբուլկեղենի,գնովի ապրանքների անվանումները,քանակը,զանգվածը և վճարման ենթակա վերջնական գինը:

Աշխատակազմի քարտուղար Ա.Խաչատրյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՀԱՑԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Հացավան համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, գ.Հացավան, (094) 519030, hatsavan.kotayk@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

30 ՄԱՅԻՍԻ 2017թվականի N 20-Ն

ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՀԱՑԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԱՐՏԱՔԻՆ ԳՈՎԱԶԴ ՏԵՂԱԴՐԵԼՈՒ ԿԱՐԳՆ ՈՒ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավերվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 41-րդ կետով համայնքի ավագանին

որոշում է

1. Սահմանել Հացավան համայնքի վարչական տարածքում արտաքին գովազդ տեղադրելու կարգն ու պայմանները՝համաձայն հավելվածի:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

Կողմ -5 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԽԱՉԱՏՐՅԱՆ ԱՆՈՒՇԱՎԱՆ
2. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ՀՐԱՅՐ
3. ՂԱՐԻԲՅԱՆ ՄՀԵՐ
4. ՊԵՏՐՈՍՅԱՆ ԿԱՐԴԱՆ
5. ՍԱՐԳՍՅԱՆ ՄԽԻԹԱՐ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ՇԱՎԱՐՇ ՍԱՐԳՍՅԱՆ

Հավելված
Հացավան համայնքի ավագանու
2017թվականի մայիսի 30 -ի
N 20 -Ն որոշման

ՀԱՑԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԱՐՏԱՔԻՆ ԳՈՎԱԶԴ ՏԵՂԱԴՐԵԼՈՒ ԿԱՐԳՆ ՈՒ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Սույն կանոններով (այսուհետ՝Կոնոններ) սահմանվում է Հացավան համայնքի վարչական տարածքում արտաքին գովազդի (այսուհետ՝գովազդ) տեղադրելու կարգն ու պայմանները:Կանոնները ընդունվել են <<Գովազդի մասին>> ՀՀ օրենքին համապատասխան:
2. Արտաքին գովազդը (այսուհետ՝գովազդ) իրավաբանական կամ ֆիզիկական անձանց ապրանքների,գաղափարների կամ նախաձեռնությունների մասին տեղեկությունների մասին տեղեկությունների տարածումն է բնակավայրերում գովազդի միջոցներով (վահանակների,գրաժապավենների,լուսատախտակների,պլակատների,ազդագրերի,հայտարարությունների և այլն) անորոշ թվով անձանց շրջանում և կոչված է ձևավորելու կամ պահպանելու հետաքրքրությունը տվյալ ֆիզիկական և իրավաբանական անձի,ապրանքների կամ նախաձեռնությունների նկատմամբ:

   ՀՀ կառավարության 2002թ.մարտի 19-ի N 270 որոշման պահանջներին համապատասխան տեղադրվող ցուցանակների վրա զետեղվող տեղեկատվությունը արտաքին գովազդ չի համարվում:

   Արտաքին գովազդ են համարվում <<Հացավան համայնքի տարածքում արտաքին գովազդի տեղադրման չափորոշիչներով>> (այսուհետ՝Չափորոշիչներ) սահմանված մակերեսից ավելի մակերեսով տեղադրվող ֆիրմային նշանները և գովազդվող ապրանքանշանները:
3. Կանոնները տարածվում են բոլոր այն տարածքների վրա,որտեղ պետք է տեղադրվի արտաքին գովազդը:
4. Համայնքային սեփականություն հանդիսացող հողամասի վրա գովազդի միջոց տեղադրելու համար ՀՀ հողային օրենսգրքով սահմանված կարգով Հացավան համայնքի ղեկավարի որոշմամբ հողամասը օգտագործման իրավունքով հանձնվում է դիմում ներկայացրած գովազդատուին՝(գովազդակրին) միաժամանակ կնքելով հողօգտագործման համապատասխան պայմանագիր,հետագայում տվյալ կողմի հետ նախապատվության իրավունքով երկարացնելու պայմանով:
5. Գովազդի տեղադրումը թույլատրվում է,եթե այն համապատասխանում է <<Գովազդի մասին>> ՀՀ օրենքի,Չափորոշիչների և Կանոնների պահանջներին:

ԳՈՎԱԶԴԻ ՏԵՂԱԴՐՄԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆԸ

6. Թույլտվությունը (հետագայում՝թույլտվություն) <<Տեղական ինքնակառավարման մասին>> ՀՀ օրենքի համաձայն և Կանոններով սահմանված կարգով տրվում է Հացավան համայնքի ղեկավարի կողմից՝Չև 1-ով սահմանված ձևաչափով:

7. Գովազդային միջոց տեղադրելու համար գովազդատուն (գովազդակիրը) հայտ է ներկայացնում Հացավան համայնքի ղեկավարին՝նշելով իր անունը,գտնվելու վայրը,գովազդի տեղադրման վայրը և ժամկետը,ինչպես նաև հարցի լուծման համար նշանակություն ունեցող այլ հանգամանքները: Հայտին կցվում է համապատասխան պատկերով և գրառումներով գովազդի միջոցի էսքիզը,որտեղ նշվում են գովազդի արտաքին չափերը,գովազդի տեղադրման ձևը (վահանակ,լուսատախտակ,պլակատներ և այլն) և տեխնիկական լուծումները:
8. Հացավանի համայնքապետարանը գովազդի միջոց տեղադրելու համար գովազդատուից (գովազդակրից) հայտը և անհրաժեշտ փաստաթղթերը ստանալուց հետո պարզում է գովազդային միջոցի համապատասխանությունը Չափորոշիչների և Կանոնների պահանջներին (եթե այն թերի է,հետ է վերադարձվում թերությունը վերացնելու և նորից 15-օրյա ժամկետում ներկայացնելու համար), և 15 օրվա ընթացքում Հացավան համայնքի ղեկավարի որոշմամբ տրվում է գովազդի տեղադրման թույլտվություն,որում նշվում են՝գովազդատուի (գովազդակրի) անվանումը,գովազդի չափերը,տեղադրման ձևը,գովազդային նյութերի անվանումը,թույլտվության գործողության ժամկետը:
9. Նույն հասցեում գովազդ տեղադրելու համար մեկից ավելի գովազդատուների (գովազդակիրների) հայտերի առկայության դեպքում Հացավան համայնքի ղեկավարը <<Հրապարակային սակարկությունների մասին>> ՀՀ օրենքի համաձայն հայտարարում և անց է կացնում մրցույթ,որի արդյունքներով մրցույթի հաղթողին տրվում է գովազդի տեղադրման թույլտվություն:
10. Թույլտվությունը հանդիսանում է հաշվառման փաստաթուղթ,որը գրանցվում է Հացվանի համայնքապետարանի թույլատվությունների հաշվառման մատյանում,իսկ թույլտվության պատճենը և հաշվառման մատյանը պահվում են համայնքապետարանի աշխատակազմի համապատասխան համայնքային ծառայողի մոտ:
11. Գովազդի միջոցի տեղադրման վերաբերյալ գովազդատուի (գովազդակրի),հայտը 15-օրյա ժամկետում կարող է մերժվել այն դեպքում,եթե՝
    1) ներկայացված փաստաթղթերը չեն համապատասխանում Չափորոշիչների և Կանոնների պահանջներին.
    2) Խախտվում են <<Գովազդի մասին>> ՀՀ օրենքի, <<Լեզվի մասին>> ՀՀ օրենքի և ՀՀ այլ քաղաքացիների անցուդարձը, խախտվում են անձանց օրենքով պաշտպանված իրավունքներն ու շահերը:
12. Գովազդային միջոց տեղադրելու հայտը մերժելու վերաբերյալ որոշման մեջ պետք է հստակ նշվեն մերժման պատճառներն ու հիմքերը:
13. Գովազդային նյութերը գովազդային միջոցների վրա տեղադրելու ժամանակ,ինչպես նաև արդեն տեղադրված գովազդվող տեղեկատվության փոփոխման դեպքում,գովազդատուն (գովազդակիրը) մինչև գովազդային նյութերի տեղադրումը կամ արդեն տեղադրված գովազդվող տեղեկատվության փոփոխումը,այդ մասին գրավոր տեղեկացնում է Հացաավնի համայնքապետարանին՝կից ներկայացնելով համապատասխան պատկերով և գրառումներով գովազդի էսքիզը,որտեղ նշվում են նաև գովազդի արտաքին չափերը: Գովազդի էսքիզը համաձայնեցվում է Հացավանի համայնքապետարանի աշխատակազմի համապատասխան մասնագետի հետ:
14. Գովազդը պետք է համապատասխանի <<Գովազդի մասին>> ՀՀ օրենքի,<<Լեզվի մասին>> ՀՀ օրենքի,Չափորոշիչների,Կանոնների և ՀՀ այլ իրավական ակտերի պահանջներին:
15. Գովազդի տեղադրման միջոցի մոնտաժային աշխատանքները կատարվում են հայտատուի պատվերով՝մասնագիտացված կազմակերպությունների կողմից մշակված և Հացավան աշխատակազմի համապատասխան հարցերով զբաղվող մասնագետի հետ համաձայնեցված նախագծով: Արտաքին գովազդի միջոց տեղադրելու համար գովազդակիրն օրենքով սահմանված կարգով պատասխանատվություն է կրում գովազդի տեղադրման միջոցի մոնտաժման ապահովության և դրա անվթար շահագործման համար:
16. Գովազդատուն (գովազդակիրը) իրավասու չէ արտաքին գովազդի տեղադրման համար իրեն տրված թույլտվությունը կամ օտարել այլ անձի:
17. Գովազդի տեղադրման թույլտվության ժամկետը լրանալու կամ երկարացնելու,պայմանագրով նախատեսված հիմքերով այն վաղաժամ դադարելու (լուծելու) դեպքում գովազդատուն

(գովազդակիրը) պարտավոր է ողջամիտ ժամկետում իր միջոցներով ապամոնտաժել գովազդը և դրա տեղադրման միջոցները,իսկ զբաղեցրած տարածքը բերել նախկին վիճակին:

18. Կանոններով նախատեսված պարտավորությունը գովազդատուի (գովազդակրի) կողմից չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու դեպքում Հացավան համայնքի ղեկավարի որոշման համաձայն գովազդի (գովազդային միջոցի) ապամոնտաժումն իրականացվում է Հացավանի համայնքապետարանի կողմից՝ օրենքով սահմանված կարգով գովազդատուից (գովազդակրից) ստանալով համապատասխան փոխհատուցում:

ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐԻ ԵՎ ՀՈՂՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՎՃԱՐԻ ՄՈՒԾՄԱՆ ԿԱՐԳԸ

19. Հացավան համայնքի ավագանին համայնքի տարածքում յուրաքանչյուր ամսվա համար արտաքին գովազդ տեղադրելու թույլտվության համար մեկ քառակուսի մետրի տեղական տուրքի դրույքաչափերը սահմանում է <<Տեղական տուրքերի և վճարների մասին>> ՀՀ օրենքին համապատասխան:
20. Այն դեպքում,երբ թույլտվության և պայմանագրի գործողության ընթացքում գովազդվող տեղեկատվությունը փոփոխվում է,որի համար օրենքով նախատեսված է տեղական տուրքի այլ դրույքաչափ,գովազդատուն (գովազդակիրը) վճարումը կատարում է <<Տեղական տուրքերի և վճարների մասին>> ՀՀ օրենքի համաձայն Հացավան համայնքի ավագանու կողմից հաստատված համապատասխան դրույքաչափերով:
21. Հողօգտագործման վճարի չափը չի կարող պակաս լինել տվյալ հողի հարկի դրույքաչափից:
22. Կանոններին համապատասխան վճարված գումարներն ուղղվում են Հացավան համայնքի բյուջե:
23. Գովազդատուի (գովազդակրի) կողմից անբարեխիղճ գովազդ թույլ տալու դեպքում՝ Հացավան համայնքի ղեկավարը գովազդի մասին օրենսդրության խախտման դադարեցման և հակագովազդի իրականացման վերաբերյալ գրավոր նախազգուշացնում է գովազդատուին (գովազդակրին):
24. Գովազդատուները (գովազդակիրները) իրավասու են օրենքով սահմանված կարգով դատական կարգով բողոքարկել գովազդի տեղադրման կապակցությամբ Հացավան համայնքի ղեկավարի որոշումներն ու գործողությունները:
25. Հացավան համայնքում արտաքին գովազդի տեղադրման գործընթացի նկատմամբ հսկողությունն օրենքով սահմանված կարգով և գովազդի մասին օրենսդրության պահպանման նկատմամբ վերահսկողությունը իրականացնում է Հացավան համայնքի ղեկավարը:
26. Գովազդային օրենսդրության պահանջների խախտումը առաջացնում է օրենքով նախատեսված պատասխանատվություն:

Աշխատակազմի քարտուղար Ա.Խաչատրյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՀԱՑԱՎԱՆ
ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Հացավան համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, գ.Հացավան, (094) 519030, hatsavan.kotayk@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

30 ՄԱՅԻՍԻ 2017թվականի N 21-Ն

ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՀԱՑԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2016ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 22_Ի N 42_Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետով և <<Իրավական ակտերի մասին>> Հայաստանի Հանարապետության օրենքի 70-րդ հոդվածի պահանջներով համայնքի ավագանին

որոշում է

1.Կոտայքի մարզի Հացավան համայնքի ավագանու 2016թվականի դեկտեմբերի 22-ի <<Հացավան համայնքի 2017-2021 թվականների զարգացման ծրագիրը հաստատելու մասին>> N 42-Ն որոշման հավելվածում 2.5 կետը լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր նախադասություններով <<Համայնքում կատարվում են աղբահանության աշխատանքներ: Աղբահանության և սանիտարական մաքրման շարունակական միջոցառումները համայնքը կդարձնեն մաքուր ու ներկայանալի>>:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հարպարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

Կողմ -5 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԽԱՉԱՏՐՅԱՆ ԱՆՈՒՇԱՎԱՆ
2. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ՀՐԱՅՐ
3. ՂԱՐԻԲՅԱՆ ՄՀԵՐ
4. ՊԵՏՐՈՍՅԱՆ ՎԱՐԴԱՆ
5. ՍԱՐԳՍՅԱՆ ՄԽԻԹԱՐ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ՇԱՎԱՐՇ ՍԱՐԳՍՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՀԱՑԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Հացավան համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, գ.Հացավան, (094) 519030, hatsavan.kotayk@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

30 ՄԱՅԻՍԻ 2017թվականի N 22-Ն

ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՀԱՑԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՔԱՂԱՔԱՇԻՆԱԿԱՆ ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 30-րդ կետի դրույթներով համայնքի ավագանին

որոշում է

1. Հաստատել Հացավան համայնքի քաղաքաշինական կանոնադրությունը համաձայն հավելվածի:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

Կողմ -5 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԽԱՉԱՏՐՅԱՆ ԱՆՈՒՇԱՎԱՆ
2. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ՀՐԱՅՐ
3. ՂԱՐԻԲՅԱՆ ՄՀԵՐ
4. ՊԵՏՐՈՍՅԱՆ ՎԱՐԴԱՆ
5. ՍԱՐԳՍՅԱՆ ՄԽԻԹԱՐ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՇԱՎԱՐՇ ՍԱՐԳՍՅԱՆ

Հավելված
ՀՀ Կոտայքի մարզի Հացավան
համայնքի ավագանու 2017 թվականի
մայիսի 30-ի N 22-Ն որոշման

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՀԱՑԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՔԱՂԱՔԱՇԻՆԱԿԱՆ ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ

Սույն կանոնադրությամբ սահմանվում են Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Հացավան համայնքի տարածքում քաղաքաշինական գործունեության իրականացման առանձնահատկությունները՝ ոլնելով համայնքի պատմականորեն ձևավորված ավանդույթների և պատմաճարտարապետական միջավայրի պահպանման անհրաժեշտությունից:

I.ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1.1. Համայնքի քաղաքաշինական կանոնադրությունը,որպես կանոն,մշակվում և հաստատվում է գոտևորման նախագծի կազմում՝ հավելվածի տեսքով:
1.2. Համայնքի ավագանու որոշմամբ քաղաքաշինական կանոնադրությունը կարող է մշակվել նաև մինչև գլխավոր հատակագծի և (կամ) գոտևորման նախագծի մշակումը՝ որպես առանձին փաստաթուղթ: Այս դեպքում կանոնադրությունը կցվում է նախագծային առաջադրանքին և պարտադիր հաշվի է առնվում համայնքի քաղաքաշինական ծրագրային փաստաթղթերի նախագծման ընթացքում:
1.3. Համայնքի ավագանու կողմից հաստատվելուց հետո քաղաքաշինական կանոնադրությամբ ամրագրված պայմանները ներառվում են համայնքի ղեկավարի կողմից կառուցապատողին տրամադրվող ճարտարապետահատակագծային առաջադրանքում՝ համապատասխան դրույթներ ամրագրելով առաջադրանի ձևի <<Լրացուցիչ պայմաններ>> բաժնում:

II.ՀԱՄԱՅՆՔԻ (ԲՆԱԿԱՎԱՅՐԻ) ՔԱՂԱՔԱՇԻՆԱԿԱՆ ԱՎԱՆԴՈՒՅԹՆԵՐԸ (Ճարտարապետության առանձնահատկությունները և շինարարության տեխնոլոգիաները)

2.1. Համայնքի տարածքում գտնվող կարևոր շենքերի և շինությունների ճարտարապետական ոճի,կրկնվող և հաճախ կիրառվող տարրերի,ճակատների ձևավորման առանձնահատկությունների,օգտագործված շինանյութի և կառուցման եղանակի նկարագրությունը:
Համայնքի տարածքում գտնվող շենքերն ու շինությունները հիմնականում քարի ճարտարապետական ոճի են,իսկ վերջին տարիներին կառուցված նորառոճ շենքերը երկաթաբետոնե կարկասային կոնստրուկտիվ լուծումներով՝ ժամանակակից բարձրորակ շինարարման նյութերի կիրառմամբ և տեխնիկական հագեցվածությամբ,հիմնադրված են ավանդականի հետ:
2.2.Նկարագրությունը հիմնավորվում է համապատասխան լուսանկարներով,գծագրերով:

III.ՊԱՀՊԱՆՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՇԵՆՔԵՐ,ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ

3.1. Համայնքի տարածքում գտնվող պատմամշակույթային հուշարձանների նկարագրությունը,դրանց ներկայիս վիճակը,վերականգնման ու պահպանման հետ կապված խնդիրները:
3.2. Կոտայքի մարզի Հացավան համայնքի տարածքում տեղակայված հուշարձանների պետական ցուցակը բերված է համապատասխան աղյուսակում:

Հ/Հ	Հուշարձանի անվանումը	Գլխավոր հատակագծի նշագրումը և մակերեսը /հա/	Տարեթիվը
1.	Ամրոց	0.61	—
2.	Գերեզմանոց	0.12	1860թ
3.	ԵԱՋ-ի հուշարձան	1.48	1978թ
4.	Հուշաղբյուր	80քմ	1943թ.

3.3. Հուշարձանները կարող են օգտագործվել գիտական,կրթական,մշակույթային և ճանաչողական նպատակներով:
3.4. Համայնքի տարածքում գտնվող պատմության և մշակույթի հուշարձանների պահպանության գոտիների սահմաններում կառուցապատման ցանկացած աշխատանքիրականացնել միայն համապատասխան նախագծերի առկայության դեպքում:
3.5. Տվյալները հիմնավորվում են պատմության և մշակույթի հուշարձանների պետական ցուցակներով,համապատասխան լուսանկարներով:

IV.ՊԱՀՊԱՆՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՇԵՆՔԵՐ,ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ

4.1. Համայնքի տարածքում գտնվող համայնքի համար կարևոր նշանակություն ունեցող շենքերը և շինություններն են,
1) Խմելու ջրի ջրամատակարարման ցանցը,որն ունի ընդլայնման և նորացման կարիք
2) Մանկապարտեզի շենքը,որը ունի վերանորոգման կարիք
3) Մշակույթի տան շենքը,որը ունի վերանորոգման կարիք
4) Համայնքի փողոցների ցանցը,որը վերանորոգման կարիք ունի բերվում են դրանց հետ առնչվող պատմությունները,ներկայացվում են շենքերի և շինությունների ներկա վիճակը,վերականգնման և պահպանման հետ կապված խնդիրները:

4.2. Տվյալները հիմնավորվում են համապատասխան լուսանկարներով,գծագրերով:

V.ՀԱՄԱՅՆՔԻ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԽՐԱԽՈՒՍՎՈՂ ՃԱՐՏԱՐԱՊԵՏԱԿԱՆ ՈՃԸ ԵՎ ՇԻՆԱՐԱՐԱԿԱՆ ՏԵԽՆՈԼՈԳԻԱՆ

5.1. Համայքնի տարածքում խրախուսվում են ինչպես ավանդական,այնպես էլ արդի ճարտարապետական ոճերը,հնարքները,դեկորատիվ տարրերը,ճակատների ձևավորման առանձնահատկությունները,դռների,պատուհանների համաչափությունները,շինարարական նյութերը և կառուցման եղանակը,որոնք պահպանվելու են համայնքի տարածքում և խրարխուսվելու են նոր շենքերի կառուցման ժամանակ:

1. **Շենքերի և շինությունների ծավալային ու ճարտարապետահատակագծային լուծումներին,ինչպես նաև դրանց առանձին մասերին ներկայացվող պահանջները**

ա. շենքի մասշտաբը,ճակատային լուծումներն ու դրանք շեշտադրող տարրերը (զարդաքնադակաները,շքամուտքը (պորտալը),որմնախորշերը,շվաքարանները,քիվերը,կամարները և այլն).
իրականացնելիս հաշվի առնել քաղաքաշինական ձևավորված կամ նոր ձևավորված միջավայրը չխաթարելու,այլ ընդհակառակը բավարարելու,զարգացնելու անհրաժեշտությունը.
հատուկ ուշադրություն դարձնել փողոցի կողմի ցանկապատի և մուտքի գեղարվեստական ձևավորմանը բարեկարգել փողոցի հարակից հատվածը միասնական ոճով և նյութերով,

բ. շենքի ճակատային մասի արտաքին բացվածքների (դռներ,պատուհաններ,ցուցափեղկեր) ձևավորումը.

գ. շենքի տանիքներն ու շենքերի հորիզոնական հարթությունները (<<հինգերորդ ճակատ>>), ինչպես նաև ճակտոնները (ֆրոնտոնները),մանսարդները,ձեղնանցքները,եզրապատերը (պարապետները) և այլն, իրականացնել,հաշվի առնելով համայնքի քաղաքաշինական միջավայրի ձևավորման վրա դրանց մեծ ազդեցությունը

դ. Շվաքարանները (տենտերը,մարկիզները),

ե. Շենքի ճակատների և տանիքի հարդարման նյութերն ու երանգավորումը,արտաքին լուսավորությունը.

2. **Փողոցների,անցումների,հետիոտն ճանապարհների ու հեծանվաուղիների (ճանապարհային ցանց), հրապարակների,ներքին բակերի,շքաբակերի (կուրդոնյերների) և հարթակների կառուցվածքին ու ձևավորմանը,ավտոկայանատեղիների կազմակերպմանը ներկայացվող պահանջները**

ա. ճանապարհային ծածկույթը (նյութը,դեկորատիվ տարրերը և գունային լուծումները),խրախուսվում են բարձրորակ,հարատև,էկոլոգիապես մաքուր և անվնաս շինարարական նյութեր.
բ. Համայնքն սպասարկող տրանսպորտի համար նախատեսված կանգառների ձևավորումը, ծածկույթով և նստարաններով հագեցնել,ձևավորել գեղարվեստական ճաշակով,բարձրորակ շին.նյութերով.
գ. հասարակական նշանակության ունեցող շենքերում և տարածքներում ապահովել հաշմանդամների և բնակչության սակավաշարժուն խմբերի տեղաշարժման համար անհրաժեշտ կահավորանքը (թեքահարթակներն ու հատուկ հարմարանքները՝ լուսային,ձայնային և այլ նախազգուշացման միջոցներով).
դ. հասարակական,ինչպես նաև մասնավոր տարածքներում խրախուսվում է ֆունկցիոնալ ձևավորումը,կանաչապատումը և կահավորանքը (փոքր ճարտարապետական ձևեր կամ դեկորատիվ արվեստի

նշումներ,զրուցարաններ,շվաքարաններ,նստարաններ,շատրվաններ,դեկորատիվ ջրավազաններ,կանաչ տնկարկներ,այդ թվում՝ ուղղահայաց կանաչապատում և այլն).
ե. Ճանապարհային ցանցին հարող պարիսպները,ցանկապատերը (այդ թվում՝ դալար ցանկապատերը) կառուցապատել բարձրորակ,անվնաս նյութերով ու ձևավորել մասնագիտական բարձր ճաշակով:

3. Լանդշաֆտին,այգեպուրակային շինարարությանը և կանաչապատմանը ներկայացվող պահանջները

ա. ընդհանուր օգտագործման կանաչ տարածքների և հետիոտն շարժման ակտիվ գոտիների կանաչապատումն ու բարեկարգումը (փոքր ճարտարապետական ձևեր,ջրային մակերեսներ,շատրվաններ,նստարաններ,տաղավարներ,զրուցարաններ և բարեկարգման այլ տարրեր),հանդիսանում են մշտական հոգածության ոլորտներ.
բ. այգեպուրակային շինարարության կազմը
(հենապատեր,ծառուղիներ,հարթակներ,աստիճաններ,ինպշչպես նաև ծառեր,թփեր,սիզամարգեր,ծաղկաթմբեր և գալարվող բույսեր,դեկորատիվ բուսական ծածկույթ,բազմամյա և միամյա բույսերի տեսակներ,կանաչապատման և բարեկարգման այլ միջոցներ).
գ.հետևողականորեն իրականացնել համայնքի փոշու՝ քամու դեմ պաշտպանական գոտու,ինչպես նաև գերեզմանոցի շուրջ սանիտարական գոտու ստեղծման միջոցառումները (ծառատունկ,կանաչ ծածկույթների իրականացում տեղական ավանդական տնկանյութերի տեսակներից՝ տարբեր բարձրության բույսերի զուգագցմամբ):